ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐ

ՀՐԱՄԱՆ

No 399-Ա **«18» ապրիլի 2023 թ.**

ՊԵՏԱԿԱՆ ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆԻ ՊԱՇՏՈՆԻ ԹԱՓՈՒՐ ՏԵՂԻ ՄՐՑՈՒՅԹԻ ՀԱՎԱԿՆՈՐԴԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության փետրվարի 9-ի N 181-Ն որոշմամբ հաստատված կարգի 25-րդ կետի պահանջը՝

Հ Ր Ա Մ Ա Յ ՈՒ Մ ԵՄ

1.Հաստատել պետական հանրակրթական ուսումնական հաստատության տնօրենի պաշտոնի թափուր տեղի մրցույթի հավակնորդի զարգացման ծրագրի գնահատման չափանիշները՝ համաձայն հավելվածի:

2.Հրամանի կատարման հսկողությունը վերապահել Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի տեղեկալ Արաքսիա Սվաջյանին:

X

ՆԱԽԱՐԱՐ՝ **Ժ.ԱՆԴՐԵԱՍՅԱՆ**

Հավելված

Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության,

մշակույթի և սպորտի նախարարի

2023թ.---------- հրամանի

1. ՊԵՏԱԿԱՆ ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ

Գնահատման ենթակա բաղադրիչը	**Բնութագրիչները**		**Միավորը**		
		0	**1**	**2**	**3**
1. Իրավիճակի վերլուծությունը. ուժեղ և թույլ կողմերը:	1.1 Ուսումնական հաստատության շենքային պայմանների վերլուծությունը.	Բացակայում է	Վերլուծությունը խիստ մասնակի պատկերացում է տալիս շենքային պայմանների մասին:	Վերլուծությունը ամբողջական չէ, բացակայում են թվային տվյալները, կարիքի գնահատման հիմնավորումները:	Վերլուծությունը ամբողջական է, համակողմանի և ընդգրկում է շենքային պայմանների բոլոր պարամետրերը:

	1.2 Ուսումնական հաստատության նյութատեխնիկական բազայի վերլուծությունը.	Բացակայում է	Վերլուծությունը խիստ մասնակի պատկերացում է տալիս նյութատեխնիկական բազայի մասին:	Վերլուծությունը ամբողջական չէ, բացակայում են թվային տվյալները, կարիքի գնահատման հիմնավորումները:	Վերլուծությունը ամբողջական է, համակողմանի և ընդգրկում է նյութատեխնիկական բազայի բոլոր պարամետրերը:
	1.3 Հաստատության կառավարման մարմնի և տնօրենի համագործակցության վերլուծությունը.	Բացակայում է	Համագործակցությունը ներկայացված է շատ ընդհանրական և պատկերացում չի տալիս իրավիճակի մասին:	Համագործակցությունը ներկայցված է մասնակիորեն, ներկայացված չեն բոլոր կողմերը, բայց առանձին ուղղություններով ամբողջական են:	Համագործակցության նկարագրությունը ամբողջական է, ներառում է համագործակցության ամբողջական ռազմավարությունը:
	1.4 Հաստատության համագործակցությունը տեղական ինքնակառավարման մարմինների, ծնողական համայնքի, կրթության կառավարման մարմինների, շահառու կազմակերպությունների հետ.	Բացակայում է	Վերլուծությունը բացակայում է կամ խիստ սահմանափակ է:	Համագործակցությունը ներկայցված է մասնակիորեն, ներկայացված չեն բոլոր կողմերը:	Վերլուծությունը ամբողջական է, ներառում է համագործակցող բոլոր կողմերը, դպրոց-համայնք կապերը, դպրոցի հանրային ընկալմանն ու հեղինակությանը, արտադպրոցական և երկարօրյա ուսուցմանն առնչվող հարցեր և նպաստում է դպրոցի զարգացման

					ծրագրային դրույթների մշակմանը:
	1.5 Մանկավարժական համակազմի մասնագիտական որակների ներկայացումը.	Բացակայում է	Սահմանափակված է խիստ մասնակի օրինակների դիտարկմամբ և պատկերացում չի տալիս մանկավարժական համակազմի մասնագիտական որակների մասին:	Ներկայցված է մասնակիորեն, ներկայացված չեն մանկավարժական համակազմի մասնագիտական որակները բնութագրող բոլոր կողմերը:	Վերլուծությունը մանկավարժական աշխատողներ ին ներկայացվող որակավորման և պաշտոնական պարտականություններ ի պահանջների համատեքստում ամբողջական է:
	1.6 Օգտագործվող ՏՀՏ և կրթական այլ տեխնոլոգիաների և նորարարությունների ներկայացումը.	Բացակայում է	Սահմանափակված է մասնակի դիտարկումներով:	Ներկայացված են միայն կրթական ծրագրերի իրականացման կամ կառավարման կամ ուսումնադաստիարակ չական աշխատանքների կազմակերպման կամ վարչատնտեսական գործունեություն որոշ ուղղություններ:	Վերլուծությունը ամբողջական է, ընդգրում է կրթական ծրագրերի իրականացման բոլոր ուղղությունները /կառավարում, ուսումնադաստիարակ չական աշխատանքներ, վարչատնտեսական գործունեություն/:
	1.7 Չափորոշչային պահանջներին համապատասխան կրթության որակի	Բացակայում է	Տրված է նկարագրական մակարդակով և հնարավոր չէ	Տրված է որակի վերլուծություն, բայց բացակայում են թվային ցուցանիչները,	Վերլուծությունը ամբողջական է, համակողմանի, օգտագործված են

	վերլուծությունը.		ամբողջական պատկերացում կազմել կրթության որակի մասին:	բացակայում է արդյունավետության դինամիկան	որակի չափման տարբեր գործիքներ, հստակ ցուցանիշներ և գնահատված է որակի դինամիկան:
	1.8 Բազմակարծիք, ներառական և մասնակցային արժեքային միջավայրի վերլուծություն	Բացակայում է:	Դպրոցի արժեքային միջավայրի մասին կատարված են միայն ընդհանրական դիտարկումներ:	Ներկայացված է վերլուծություն, որում առկա է մասնակի անդրադարձ բազմակարծիք, ներառական և մասնակցային արժեքային միջավայրի ձևավորման, սովորողների կրթական, սոցիալական, առողջապահական շահերի և իրավունքների պաշտպանության արդյունավետությանը:	Ներկայացված է վերլուծություն, որում առկա է ամբողջական անդրադարձ բազմակարծիք, ներառական և մասնակցային արժեքային միջավայրի ձևավորման, սովորողների կրթական, սոցիալական, առողջապահական շահերի և իրավունքների պաշտպանության արդյունավետությանը:

	1.9 Աշխատակազմի արժևորման, խրախուսման և ինքնակրթության հնարավորությունների վերլուծությունը:	Բացակայում է:	Ներկայացված են ուսումնական հաստատության ինքնակրթության հնարավորություններն ու վերապատրաստումների մասին տեղեկատվություն:	Ներկայացված է վերլուծություն մանկավարժական աշխատողների մասնագիտական շարունակական զարգացման, ինքնակրթության և վերապատրաստումների արդյունավետության մասին:	Ներկայացված է վերլուծություն մանկավարժական աշխատողների մասնագիտական շարունակական զարգացման, ինքնակրթության և վերապատրաստումների արդյունավետության մասին, ինչպես նաև աշխատակազմի արժևորման և խրախուսման համակարգի վերլուծություն:
	1.10 Ուսումնական նպատակով կատարված ծախսերի վերլուծությունը՝ դրանց արդյունավետության, ցուցանիշների շեղումների և պլանավորման խնդիրների տեսանկյունից:	Բացակայում է	Տրված է թվային ցուցանիշներով, որոնք լիարժեք չեն արտահայտում ուսումնական նպատակով ծախսերի արդյունավետությունը:	Արդյունավետության տեսանկյունից ներկայացված է, աշակերտների և անձնակազմի թվի հարաբերակցության, ինչպես նաև ուսումնական և վերապատրաստումնե	Հիմնավոր կերպով ներկայացված է աշակերտների և անձնակազմի թվի հարաբերակցության, ուսումնական և վերապատրաստումների նպատակով միջոցների

				րի նպատակով միջոցների պլանավորման ու առաջադիմության մակարդակի վերլուծությունը:	պլանավորման, այդ ցուցանիշների շեղումների վերլուծությունը, ինչպես նաև ծախսված միջոցների ու առաջադիմության մակարդակի համեմատությունը:
Ամփոփ եզրակացություն					
Գնահատման բաղադրիչի միջին միավորը (տվյալ բաղադրիչի միջին միավորը գտնելու համար բաղադրիչի բոլոր բնութագրիչներից հավաքած միավորների գումարը բաժանվում է բնութագրիչների թվին (1.1+1.2+1.3+1.4+1.5+1.6+1.7+1.8+1.9+1.10)/10):					ՄԻՋԻՆ ՄԻԱՎՈՐ
2. Նպատակների և խնդիրների սահմանումը.	2.1 Նպատակների սահմանում, դրանց համապատասխանությունը առկա իրավիճակին և հնարավորություններն	Բացակայում է	Սահմանված նպատակները չեն համապատասխանում դպրոցի իրական կարիքներին:	Ներկայացված է մասնակի, հիմնականում համապատասխանում է դպրոցի կարիքներին, բայց հաշվի չեն առնվել դպրոցի հնարավորությունները:	Ամբողջական են, բխում են դպրոցի կարիքներից, համապատասխանում են դպրոցի հնարավորությունների ն:

	2.2 Խնդիրների սահմանումը, դրանց համապատասխանությունը նպատակներին:	Բացակայում է	Բացակայում է կամ սահմանված խնդիրները չեն համապատասխանում նպատակներին:	Ներկայացված են մասնակի, քիչ են նպաստում սահմանված նպատակների իրականացմանը:	Ամբողջական են, բխում են սահմանված նպատակներից, համապատասխանում են դպրոցի հնարավորությունների ն:
Ամփոփ եզրակացություն					
Գնահատման բաղադրիչի միջին միավորը(տվյալ բաղադիրչի միջին միավորը գտնելու համար բաղադրիչի բոլոր բնութագրիչներից հավաքած միավորների գումարը բաժանվում է բնութագրիչների թվին (2.1+2.2)/2):					ՄԻՋԻՆ ՄԻԱՎՈՐ
3. Ուսումնական հաստատության գործունեությունը.	3.1 Կրթական կարիքների նկարագրությունը.	Բացակայում է	Դիտարկված են խիստ մասնակիորեն և շատ քիչ պատկերացում են տալիս դպրոցում կրթական կարիքների մասին և կրթական կարիքների զգալի մասը չի առնչվում տվյալ դպրոցին:	Կրթական կարիքները ներկայացված են բոլոր ուղղություններով՝ կառավարում, ուսումնադաստիարակչական աշխատանքներ, վարչատնտեսական գործունեություն, սակայն ոչ ամբողջական են:	Կրթական կարիքները ներկայացված են համակողմանիորեն և ամբողջական: Տրված են բոլոր ուղղություններով / կառավարում, ուսումնադաստիարակչական աշխատանքներ, վարչատնտեսական գործունեություն/:

	3.2 Համապատասխանությունը պետության կրթական քաղաքականության միտումներին. համայնքի, շահառու խմբերի կարիքներին ու հնարավորություններին.	Բացակայում է	Ներկայացված է միակոմանի և խիստ ընդհանրական, տրված չեն կարիքներն ու հնարավորությունները:	Ներկայցված է մասնակիորեն, դիտարկված չեն բոլոր շահառու կողմերի կարիքները:	Համապատասխանում է պետության կրթական քաղաքականության միտումներին, համայնքի, շահառու բոլոր խմբերի կարիքներին ու հնարավորությունների ն:
	3.3 Համապատասխանությունը հաստատության ենթակառուցվածքների (դահլիճներ, լաբորատորիաներ, արհեստանոցներ, առարկայական կաբինետներ, ճաշարան, բուժկետ և այլն) հնարավորություններին, մարդկային ռեսուրսներին և ներուժին.	Բացակայում է	Անդրադարձ է արված հաստատության մի քանի ենթակառուցվածքներ ի:	Դիտարկված են բոլոր կողմերը, սակայն բացակայում են քանակական և/կամ որակական հիմնավորումները:	Ամբողջովին համապատասխանում է հաստատության ենթակառուցվածքներ ի հնարավորությունների ն, մարդկային ռեսուրսներին և ներուժին:
Ամփոփ եզրակացություն					
Գնահատման բաղադրիչի միջին միավորը (տվյալ բաղադրիչի միջին միավորը գտնելու համար բաղադրիչի բոլոր բնութագրիչներից հավաքած միավորների					ՄԻՋԻՆ ՄԻԱՎՈՐ

գումարը բաժանվում է բնութագրիչների թվին (3.1+3.2+3.3)/3):					
4. Սահմանված նպատակների և խնդիրների իրականացումն ապահովող գործողություններն ու միջոցառումները.	4.1 Ըստ ոլորտների նպատակների և խնդիրների մշակված են համապատասխան գործողությունները	Բացակայում է	Սահմանված գործողությունները չեն համապատասխանում խնդիրներին:	Ներկայացված են մասնակի, քիչ են նպաստում սահմանված խնդիրների իրականացմանը:	Ամբողջական են, բխում են սահմանված խնդիրներից, համապատասխանում են դպրոցի հնարավորությունների ն:
	4.2 Ըստ ոլորտների նպատակների և խնդիրների մշակված են համապատասխան ժամանակացույցները	Բացակայում է	Սահմանված ժամանակացույցները չեն համապատասխանում գործողություններին:	Ներկայացված են մասնակի, սահմանափակ, ոչ միշտ են իրատեսական:	Ամբողջական են, բխում են սահմանված գործողություններից, համապատասխանում են դպրոցի հնարավորությունների ն:
Ամփոփ եզրակացություն					
Գնահատման բաղադրիչի միջին միավորը (տվյալ բաղադրիչի միջին միավորը գտնելու համար բաղադրիչի բոլոր բնութագրիչներից հավաքած միավորների գումարը բաժանվում է բնութագրիչների թվին (4.1+4.2)/2):					ՄԻՋԻՆ ՄԻԱՎՈՐ

5. Ուսումնական հաստատության զարգացման ծրագրի կատարման պատասխանատուները.	5.1 Զարգացման ծրագրի յուրաքանչյուր բաղադրիչի կատարման համար նախատեսված են առանձին պատասխանատուներ:	Բացակայում է	Զարգացման ծրագրի յուրաքանչյուր բաղադրիչի կատարման համար նախատեսված չեն առանձին պատասխանատուներ:	Զարգացման ծրագրի յուրաքանչյուր բաղադրիչի կատարման համար նախատեսված են պատասխանատուներ, սակայն նրանց մի մասը տվայլ ուղղությունների մասնագետներ չեն, կամ չեն համապատասխանում իրենց պաշտոնային պարտականություններին:	Զարգացման ծրագրի յուրաքանչյուր բաղադրիչի կատարման համար նախատեսված են պատասխանատուներ ըստ ուղղությունների:
Ամփոփ եզրակացություն					
Գնահատման բաղադրիչի միջին միավորը (տվյալ բաղադիրչի միջին միավորը գտնելու համար բաղադրիչի բոլոր բնութագրիչներից հավաքած միավորների գումարը բաժանվում է բնութագրիչների թվին (5.1)/1):)					ՄԻՋԻՆ ՄԻԱՎՈՐ
6. Ուսումնական հաստատության զարգացման ծրագրի կատարման արդյունքների	6.1 Աահմանված են յուրաքանչյուր գործողության առանձնահատկությունից բխող գնահատման չափանիշները:	Բացակայում է	Սահմանված են միայն առանձին գործողությունների համար:	Գնահատման չափանիշներ մշակված են գրեթե բոլոր ուղղությունների համար, սակայն դրանց մի մասը օբյեկտիվ և	Սահմանված են գնահատման չափանիշներ բոլոր ուղղություններով կարատվող արդյունքների համար: Դրանք օբյեկտիվ և

գնահատման չափանիշները.				իրատեսական չէ:	իրատեսական են:
	6.2 Սահմանված են կրթության որակի և առաջադիմության վրա ուսումնադաստիարակչական աշխատանքների ազդեցության գնահատման չափանիշները:	Բացակայում է	Սահմանված են կրթության որակի և առաջադիմության վրա ուսումնադաստիարակչական աշխատանքների ազդեցության մեկ-երկու չափանիշ:	Սահմանված են կրթության որակի և առաջադիմության վրա ուսումնադաստիարակչական աշխատանքների ազդեցության մի քանի չափանիշ:	Սահմանված են կրթության որակի և առաջադիմության վրա ուսումնադաստիարակչական աշխատանքների գնահատման համակարգ, որը ընդգրկում է դասի որակի ստուգման և սովորողների խրախուսման ձևերը:
	6.3 Սահմանված են բազմակարծիք, ներառական և մասնակցային արժեքային միջավայրի գնահատման չափոնիշները:	Բացակայում է	Սահմանված են բազմակարծիք, ներառական և մասնակցային արժեքային միջավայրի գնահատման մեկ-երկու չափոնիշ:	Սահմանված են բազմակարծիք, ներառական և մասնակցային արժեքային միջավայրի գնահատման մի քանի չափոնիշ:	Սահմանված է ժողովրդավարական մշակույթի, ուսուցիչների մասնակցային աշխատանքի, մասնակցային կառավարման և որոշումների ընդունման, բոլոր շահառու ծմբերի ներգրավվածության գնահատման չափանիշների

					համակարգ:
	6.4 Սահմանված են աշխատակազմին արժևորման, խրախուսման և ինքնակրթության միջավայրի ձևավորման գնահատման չափանիշները:	Բացակայում է	Սահմանված են աշխատակազմին արժևորման, խրախուսման և ինքնակրթության միջավայրի ձևավորման գնահատման մեկ-երկու չափանիշներ:	Սահմանված են աշխատակազմին արժևորման, խրախուսման և ինքնակրթության միջավայրի ձևավորման գնահատման մի քանի չափանիշներ:	Մշակված է աշխատակազմին արժևորման, խրախուսման և ինքնակրթության միջավայրի ձևավորման, ինչպես նաև վերապատրաստումների արդյունավետության գնահատման չափանիշների համակարգ:
	6.5 Սահմանված են դպրոց-համայնք կապերի, ծնողական համայնքի, գործընկերների հետ համագործակցության, արտադպրոցական և երկարօրյա ուսուցման գնահատման չափանիշներ:	Բացակայում է	Սահմանված են դպրոց-համայնք կապերի, ծնողական համայնքի, գործընկերների հետ համագործակցության, արտադպրոցական և երկարօրյա ուսուցման գնահատման մեկ-երկու չափանիշներ:	Սահմանված են դպրոց-համայնք կապերի, ծնողական համայնքի, գործընկերների հետ համագործակցության, արտադպրոցական և երկարօրյա ուսուցման գնահատման մի քանի չափանիշներ:	Սահմանված են դպրոց-համայնք կապերի, ծնողական համայնքի, գործընկերների ներգրավման, արտադպրոցական և երկարօրյա ուսուցման միջոցով կրթության բարելավման, անհավասարությունների հաղթահարման և համայնքային նախագծերի

					փևավորման գնահատման չափանիշների համակարգ:
	6.6 Սահմանված են հալածանքի, օտարման և բռնության կանխարգելման գնահատման չափանիշներ:	Բացակայում է	Սահմանված է միայն հալածանքի, օտարման և բռնության կանխարգելման գնահատման մեկ-երկու չափանիշ:	Սահմանված է միայն հալածանքի (այդ թվում՝ մեդիայի միջոցով), օտարման և բռնության կանխարգելման գնահատման մի քանի չափանիշ:	Սահմանված է միայն հալածանքի (այդ թվում՝ մեդիայի միջոցով), օտարման և բռնության կանխարգելման, վերահսկման, ճգնաժամերի լուծման գնահատման չափանիշների համակարգ:
Ամփոփ եզրակացություն					
Գնահատման բաղադրիչի միջին միավորը (տվյալ բաղադրիչի միջին միավորը գտնելու համար բաղադրիչի բոլոր բնութագրիչներից հավաքած միավորների գումարը բաժանվում է բնութագրիչների թվին (6.1+6.2+6.3+6.4+6.5+6.6)/6):					ՄԻՋԻՆ ՄԻԱՎՈՐ
7. Ուսումնական հաստատության զարգացման ծրագրի իրականացման	7.1 Հաշվի են առնվել նպատակի, խնդիրների, դրանց լուծմանն ուղղված յուրաքանչյուր գործողությունից բխող հնարավոր ռիսկերը:	Բացակայում է	Սահմանված են միայն առանձին գործողությունների համար:	Ներկայացված են բոլոր ուղղությունների համար, սակայն դրանց մի մասը օբյեկտիվ և իրատեսական չեն:	Սահմանված են բոլոր ուղղություններով կարատվող արդյունքների համար: Դրանք օբյեկտիվ և իրատեսական են:

ռիսկերը.	7.2 Նախատեսվել են հնարավոր ռիսկերը մեղմացնող կամ չեզոքացնող գործողություններ:	Բացակայում է	Սահմանված են միայն առանձին գործողությունների համար:	Ներկայացված են բոլոր ուղղությունների համար, սակայն դրանց մի մասը օբյեկտիվ և իրատեսական չեն:	Սահմանված են բոլոր ուղղություններով կարատվող արդյունքների համար: Դրանք օբյեկտիվ և իրատեսական են:
Ամփոփ եզրակացություն					
Գնահատման բաղադրիչի միջին միավորը (տվյալ բաղադիրչի միջին միավորը գտնելու համար բաղադրիչի բոլոր բնութագրիչներից հավաքած միավորների գումարը բաժանվում է բնութագրիչների թվին (7.1+7.2)/2):					ՄԻՋԻՆ ՄԻԱՎՈՐ
8. Ուսումնական հաստատության զարգացման ծրագրի իրականացման համար անհրաժեշտ միջոցները և նյութատեխնիկական պարագաները.	8.1 Յուրաքանչյուր գործողության իրականացման և ակնկալվող արդյունքների լիարժեք ապահովման համար պահանջվող անհրաժեշտ միջոցները և նյութատեխնիկական պարագաները բավարար են և նպատակային:	Բացակայում է	Ներկայացված են առանձին ուղղությունների համար:	Ներկայցված են բոլոր ուղղությունների համար, սակայն հիմնավորված չեն նպատակային և բավարար առումներով:	Ներկայցված են բոլոր ուղղությունների համար, հիմնավորված են նպատակային և բավարար առումներով:
	8.2 Զարգացման ծրագրում հավասարաչափ և արդյունավետ օգտագործել է մարդկային, բյուջետային և տեխնոլոգիական	Բացակայում է	Ներկայցված է խիստ սահմանափակ ուղղություններով:	Ներկայացված են բոլոր ուղղությունների համար, սակայն հիմնավորված չէ ռեսուրսների	Ներկայացված է նյութական միջոցների պլանավորման հայեցակարգ, որն ընդգրկում է

	ռեսուրսները:			ծախսման արդյունավետությունը:	նյութական ռեսուրսների ծախսման արդյունավետությանը, հաշվետվողականության, թափանցիկությանն ու մասնակցայնությանն ուղղված միջոցառումներ և դրանց ֆինանսավորման աղբյուրները:
Ամփոփ եզրակացություն					
Գնահատման բաղադրիչի միջին միավորը (տվյալ բաղադրիչի միջին միավորը գտնելու համար բաղադրիչի բոլոր բնութագրիչներից հավաքած միավորների գումարը բաժանվում է բնութագրիչների թվին (8.1+8.2)/2):					ՄԻՋԻՆ ՄԻԱՎՈՐ
9. Ուսումնական հաստատության զարգացման ծրագրի իրականացման վերահսկողության մեխանիզմները	9.1 Յուրաքանչյուր գործողություն համար նախատեսվել են վերահսկողության մեխանիզմներ:	Բացակայում է	Սահմանվել են մի քանի գործողությունների համար	Բոլոր գործողությունները ներկայացված են, սակայն վերահսկողության մեխանիզմները սահմանված են ոչ բոլոր գործողությունների	Վերահսկողության մեխանիզմները սահմանված են բոլոր գործողությունների համար:

				համար:	
	9.2 Յուրաքանչյուր գործողության համար նախատեսվել են համապատասխան հաշվետվությունների սահմանված ձևեր ու ժամանակացույցներ:	Բացակայում է	Սահմանվել են մի քանի գործողությունների համար	Առկա են բոլոր գործողությունների համար, սակայն ժամանակացույցները իրատեսական չեն:	Յուրաքանչյուր գործողության համար նախատեսվել են համապատասխան հաշվետվությունների սահմանված ձևեր և իրատեսական ժամանակացույցեր:
Ամփոփ եզրակացություն					
Գնահատման բաղադրիչի միջին միավորը (տվյալ բաղադիրչի միջին միավորը գտնելու համար բաղադրիչի բոլոր բնութագրիչներից հավաքած միավորների գումարը բաժանվում է բնութագրիչների թվին (9.1+9.2)/2):					ՄԻՋԻՆ ՄԻԱՎՈՐ

2. ՊԵՏԱԿԱՆ ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄԸ

1. Զարգացման ծրագրի յուրաքանչյուր բաղադրիչ ունի բնութագրիչներ: Բոլոր բնութագրիչները գնահատվում են 0-3 միավորային սանդղակով՝ համաձայն Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի կողմից հաստատված չափանիշների:
2. Զարգացման ծրագրի յուրաքանչյուր բաղադրիչի համար հաշվարկվում է միջին միավորը: Դրա համար տվյալ բաղադրիչի բոլոր բնութագրիչներից հավաքված միավորների գումարը բաժանվում է բնութագրիչների թվին:
3. Եթե զարգացման ծրագրի որևէ բաղադրիչի միջին միավորը 2 միավորից ցածր է՝ զարգացման ծրագրին տրվում է բացասական եզրակացություն:
4. Զարգացման ծրագրի գնահատման ամբողջական միավորը որոշվում է բոլոր բաղադրիչների միջին միավորների գումարով:
5. 18 և ավելի միավոր գնահատված զարգացման ծրագրին տրվում է դրական եզրակացություն: